ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

19 դեկտեմբերի 2012թ. թիվ 651

ԽԱՉԱՏՈՒՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 9-ի N 808-Նորոշումը և Խ.Միքայելյանի բացատրությունը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ ե մ.

ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 9-ի N 808-Ն որոշմամբ հաստատված տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման կարգի պահանջները չկատարելու պատճառով «ՀՀ Լոռու մարզի Ղուրսալիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Խաչատուր Միքայելյանի նկատմամբ կիրառել «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. դեկտեմբերի 19
ք.Վանաձոր